

Հաստատված է

Համաձայնեցված է

ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտ ՊՈԱԿ-ի
գիտխորհրդի 2021 թ. օգոստոսի 2-ի
որոշմամբ

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական
գիտությունների բաժանմունքի հետ

(արձանագրություն թ. _____)

ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի գիտական աշխատողների ատեստավորման ներքին կանոնակարգ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կարգով սահմանվում է ՀՀ ԳԱԱ ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտ ՊՈԱԿ-ի գիտական աշխատողի զբաղեցրած գիտական պաշտոնին համապատասխանության հաստատման գործընթացը:

Ատեստավորում անցկացնելու համար հիմք են հանդիսացել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ՀՀ կառավարության 2001 թ. հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատելու մասին» թիվ 935 որոշմամբ հաստատված գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 1121-Լ որոշմամբ հաստատված նվազագույն պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցների աղյուսակում նշված գիտական կադրերի պաշտոնների տարակարգերը:

1 Ատեստավորում

1. Սույն կարգով կարգավորվում են գիտական աշխատողի, այդ թվում՝ համատեղության կարգավիճակով գիտական աշխատողների ատեստավորման գործընթացներն ու հարաբերությունները:
2. Ատեստավորումը զբաղեցրած պաշտոնին գիտական աշխատողի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների, հմտությունների և կարողությունների համապատասխանության հաստատագրումն է:

Ատեստավորման նպատակն է.

ա/ գնահատել գիտական աշխատողի մասնագիտական պատրաստվածության աստիճանը և հաշվետու ժամանակահատվածում նրա կողմից ստացված գիտական արդյունքները,

բ/ հավաստագրել գիտական աշխատողի մասնագիտական հմտությունների և կարողությունների համապատասխանությունը նրա զբաղեցրած պաշտոնին:

Ատեստավորմանը երեք անգամ անհարգելի պատճառով չներկայանալը գիտական աշխատողին պաշտոնից ազատելու հիմք է հանդիսանում:

3. Գիտական աշխատողի հերթական ատեստավորումն անցկացվում է առնվազն հինգ տարին մեկ անգամ:
4. Գիտական աշխատողի արտահերթ ատեստավորումն իրականացվում է հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո սույն կարգի դրույթներին համաձայն՝ համապատասխան հիմքերի ի հայտ գալու պարագայում, աշխատողի անմիջական ղեկավարի և/կամ կազմակերպության ղեկավարի կողմից դրա վերաբերյալ պատճառաբանված գրավոր հիմնավորում ներկայացնելու դեպքում:
5. Աշխատողը ենթակա է նաև արտահերթ ատեստավորման, եթե նրա կողմից գիտական հետազոտությունները իրականացվել են գիտական կամ գիտատեխնիկական գործունեության շրջանակներում կնքված պայմանագրերին ոչ համապատասխան, ընթացիկ ժամանակահատվածում աշխատողը հնարավոր միջոցներ չի ձեռնարկել իր պարտականությունների պատշաճ կատարման և/կամ որակավորման բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև խախտվել են գիտական և գիտատեխնիկական գործունեության հետ կապված հարաբերությունները կանոնակարգող այլ իրավական ակտերի պահանջները:
6. Ատեստավորման ենթակա չեն՝
 - ա/ տվյալ պաշտոնը երկու տարուց պակաս ժամկետով զբաղեցնող գիտական աշխատողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել,
 - բ/ հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող գիտական աշխատողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել,
 - գ/ պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած գիտական աշխատողները՝ վերադառնալուց հետո մեկ տարվա ընթացքում, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել,
 - դ) վարչական պաշտոններ զբաղեցնող աշխատողները (տնօրեն, փոխտնօրեն, գիտական քարտուղար, լաբորատորիայի վարիչ, բաժնի վարիչ և այլն), որոնք վարչական տեղերի մրցույթով անցնելու արդյունքում հրամանագրված են տվյալ պաշտոնում որոշակի ժամանակահատվածով:
7. Հղիության և երեխայի խնամքի արձակուրդում գտնվող գիտական աշխատողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո՝ ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ավելի վաղ ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել:
8. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ գիտական աշխատողները ենթակա են ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:
9. Կազմակերպություններում ատեստավորումը անցկացվում է ըստ հետևյալ պաշտոնների՝

9.1 Գիտական պաշտոններ.

- ա/ գլխավոր գիտական աշխատող,
- բ/ առաջատար գիտական աշխատող,
- գ/ ավագ գիտական աշխատող,
- դ/ գիտական աշխատող,
- ե/ կրտսեր գիտական աշխատող:

9.2 Ճարտարագիտատեխնիկական պաշտոններ.

- ա/ ավագ լաբորանտ
- բ/ լաբորանտ
- գ/ ավագ ճարտարագետ
- զ/ ճարտարագետ:

Գիտական աշխատողների որակավորման գնահատման չափանիշներն այն պահանջներն են, որոնք ներկայացվում են տվյալ տարակարգը հայցող գիտական աշխատողին: Որակավորման գնահատման չափանիշները սահմանելիս հաշվի են առնվում նաև տվյալ գիտական աշխատողի տարակարգին համապատասխան պարտականությունները:

Այն պաշտոնները, որոնք տարակարգված չեն գիտական աշխատողների տարակարգմամբ և նշված են այլ անվանումներով, և որոնց գործունեության բնույթը բավարարում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի բ/ ենթակետի՝ գիտական աշխատողին ներկայացվող պահանջներին, պետք է անցնեն ատեստավորում, տարակարգվեն ու ներկայացվեն գիտաշխատողների պաշտոնների տարակարգմամբ:

10. Տվյալ գիտական պաշտոնը բնորոշող չափանիշներին չբավարարող, սակայն պաշտոնը զբաղեցրած գիտաշխատողները չեն կարող մասնակցել տվյալ պաշտոնում ատեստավորմանը, նրանց պաշտոնը ենթակա է փոփոխման:

11. Ատեստավորման անցկացման ժամանակացույցը սահմանվում է կազմակերպության ղեկավարի հրամանով և ատեստավորման ենթակա անձինք դրա մասին տեղեկացվում են ատեստավորման անցկացման սկզբից՝ առնվազն մեկ ամիս առաջ: Գիտական աշխատողների ատեստավորումը անցկացնելու համար գիտական կազմակերպության ղեկավարի հրամանով ստեղծվում է տվյալ կազմակերպության 5-7 առաջատար գիտնականներից բաղկացած ատեստավորման հանձնաժողով:

Կազմակերպության ղեկավարի հրամանով նշանակվում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

12. Ատեստավորման ենթակա գիտական աշխատողները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ ծանուցվում են ատեստավորում անցնելու անհրաժեշտության մասին՝ լրացնելով ատեստավորում անցնելու տեղեկացման թերթիկը (Ձև N 1):
13. Ատեստավորումը անցկացնելուց առնվազն 15 օր առաջ հանձնաժողովին է ներկայացվում ատեստավորվող գիտական աշխատողի՝
 - ա/ անմիջական ղեկավարի բնութագիրը նրա մասին, որում նշվում է գիտական աշխատողի կողմից նախորդ ատեստավորումից հետո կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների և կատարողականների գնահատականները:
 - բ/ ատեստավորվող գիտական աշխատողը հանձնաժողովին ներկայացնում է իրեն վերաբերող տեղեկատվություն համաձայն ձև 3-ի:
14. Գիտական աշխատողը ատեստավորման պահից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր վերաբերյալ ներկայացված բնութագրին: Բնութագրին համաձայն չլինելու դեպքում գիտական աշխատողը ներկայացնում է գրավոր առարկություններ, որոնք բնութագրի հետ միասին փոխանցվում են ատեստավորման հանձնաժողովին:
15. Ատեստավորման ենթակա գիտական աշխատողի բնութագիրը, իր գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, ատեստավորում անցնելու տեղեկացման թերթիկը մինչև ատեստավորման անցկացումը հանձնաժողովի քարտուղարը ներկայացնում է հանձնաժողովի անդամներին:
16. Ատեստավորումն անցկացվում է գիտական աշխատողի անմիջական մասնակցությամբ՝ հարցազրույցի եղանակով: Հանձնաժողովը յուրաքանչյուր գիտաշխատողի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:
17. Ատեստավորումն անցկացվում է գիտաշխատողի անմիջական ղեկավարի պարտադիր մասնակցությամբ: Հանձնաժողովը քննարկում է բնութագրի վերաբերյալ գիտաշխատողի գրավոր առարկությունները (այդպիսիք լինելու դեպքում):
18. Գիտաշխատողի հետ հարցազրույցն ավարտելուց հետո անցկացվում է փակ քվեարկություն: Հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ ընդունվում է որոշում:
19. Ատեստավորման արդյունքներն ու հանձնաժողովի երաշխավորությունները նիստից հետո 5 օրվա ընթացքում ներկայացվում են կազմակերպության ղեկավարին, որոնք հիմք են հանդիսանում տվյալ գիտական աշխատողի պաշտոնի բարձրացման կամ իջեցման, պաշտոնից ազատման, պաշտոնական դրույքաչափի բարձրացման կամ իջեցման ու հավելավճարի սահմանման համար:

III. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄՆ Ու ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

20. Աշխատողի որակավորման գնահատման նպատակով իրականացված ատեստավորման արդյունքները կարող են գրավոր բողոքարկվել ատեստավորման արդյունքի հետ անհամաձայնություն ունեցող տվյալ աշխատողի և/կամ հանձնաժողովի անդամի կողմից՝ ատեստավորման թերթիկի (Ձև 2) տվյալներին ծանոթանալուց հետո հինգօրյա ժամկետում:

Գրավոր բողոքը, բողոքարկման պատճառների նշումով, ներկայացվում է կազմակերպության ղեկավարին և ՀՀ ԳԱԱ համակարգում գործող ատեստավորման արդյունքների բողոքարկման հանձնաժողովին՝ վերջինիս կողմից քննության առնելու նպատակով:

21. Գրավոր բողոքը, այն ներկայացնելու օրը կամ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, կազմակերպության ղեկավարի հանձնարարությամբ փոխանցվում է կազմակերպությունում գործող հանձնաժողովին:
22. Բողոքը ստանալու օրը կամ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը հանձնաժողովի քարտուղարը Կազմակերպությունում տեսանելի ցուցանակի վրա հրապարակում է գրավոր բողոքի ներկայացման մասին տեղեկատվություն, որում նշվում է այն աշխատողի անունը, հայրանունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը, ում ատեստավորման արդյունքների վերաբերյալ ներկայացվել է գրավոր բողոք:
23. Կազմակերպությունում գործող հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը գրավոր բողոքը ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում տվյալ աշխատողի որակավորման գնահատման նպատակով իրականացված ատեստավորման արդյունքում կազմված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի և կից նյութերի լուսապատճենների փաթեթն ուղարկում է ՀՀ ԳԱԱ համակարգում գործող բողոքարկման հանձնաժողովին:
24. ՀՀ ԳԱԱ համակարգի բողոքարկման հանձնաժողովը տվյալ աշխատողի ատեստավորման վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը ստանալուն հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում քննության է առնում ներկայացված գրավոր բողոքը:
25. Գրավոր բողոքը քննության առնելիս և որոշում ընդունելիս քննարկմանը չի մասնակցում ՀՀ ԳԱԱ այն անդամը, որը տվյալ ատեստավորմանը մասնակցել է որպես հանձնաժողովի անդամ:
26. Գրավոր բողոքը քննության առնելիս ՀՀ ԳԱԱ բողոքարկման հանձնաժողովն ուսումնասիրում է ատեստավորման վերաբերյալ կազմված բոլոր անհրաժեշտ փաստաթղթային տվյալները, ատեստավորման իրականացման ժամանակ սահմանված ընթացակարգային դրույթների պահպանվածությունը, անհրաժեշտության դեպքում հրավիրում և լսում է բողոք ներկայացրած անձին, ինչպես նաև աշխատողի անմիջական ղեկավարին և/կամ կազմակերպությունում գործող հանձնաժողովի ներկայացուցչին, որից հետո ընդունում է որոշում՝ «բողոքը մերժել» կամ «նշանակել նոր ատեստավորում»:
27. ՀՀ ԳԱԱ համակարգում աշխատողի որակավորման գնահատման նպատակով ատեստավորման արդյունքների բողոքարկման հանձնաժողովն իր ընդունած որոշումը, նույն կամ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, ուղարկում է տվյալ կազմակերպություն, որի մասին իրազեկվում է բողոք ներկայացրած անձը: Պահանջի դեպքում բողոք ներկայացրած անձին տրամադրվում է արդյունքների բողոքարկման հանձնաժողովի կայացրած որոշման լուսապատճենը:
28. Աշխատողի որակավորման գնահատման նպատակով իրականացված ատեստավորման արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով:

ԳԼԽԱՎՈՐ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂ

Գլխավոր գիտական աշխատողի պաշտոնը կարող են զբաղեցնել՝
ա. ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամները.

բ. գիտությունների դոկտորի աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտնականները, որոնք ղեկավարում են գիտական ուղղություն և (կամ) ստեղծել են գիտական դպրոց և ունեն առնվազն 15 տարվա գիտական աշխատանքի ստաժ:

Գլխավոր գիտական աշխատողը պետք է՝ ղեկավարի (կամ մասնակցի) կարևորագույն նշանակություն ունեցող գիտական հետազոտություններ (մշակումներ, նախագծեր), այդ թվում՝ գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրեր, առաջադրի հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) նոր ուղղություններ, որոշի դրանց իրականացման ուղիներն ու միջոցները, ընդհանրացնի հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) արդյունքները, որոշի դրանց օգտագործման ոլորտները, համակարգի այլ կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող գիտական և գիտատեխնիկական աշխատանքները, իրականացնի գիտական կադրերի պատրաստման և վերաորակավորման աշխատանքները:

ԱՌԱՋԱՏԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂ

Առաջատար գիտական աշխատողի պաշտոնը կարող են զբաղեցնել՝
ա) ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամները.

բ) գիտությունների դոկտորի գիտական աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտնականները.

գ) գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող գիտնականները, որոնք ունեն առնվազն 10 տարվա գիտական աշխատանքի ստաժ, տվյալ մասնագիտությամբ արժեքավոր գիտական աշխատանքներ, կարևոր նախագծեր և մշակումներ:

Առաջատար գիտական աշխատողը պետք է՝

մասնակցի առանձին թեմաների և առաջադրանքների շրջանակներում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր), ղեկավարի այդ հետազոտությունները (մշակումներ, նախագծեր) կատարող աշխատանքային խումբ կամ այլ գիտական կառուցվածքային ստորաբաժանում, հիմնավորի նոր հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) ուղղությունները և դրանց իրականացման եղանակները, մշակի աշխատանքային ծրագրեր, ընդհանրացնի հետազոտությունների արդյունքները, որոշի դրանց օգտագործման ոլորտները, մասնակցի գիտական կադրերի պատրաստմանը և դրանց որակավորման բարձրացմանը:

ԱՎԱԳ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂ

Ավագ գիտական աշխատողի պաշտոնը կարող են զբաղեցնել՝

ա) գիտությունների դոկտորի գիտական աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտնականները.

բ) գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և առնվազն 10 տարվա գիտական աշխատանքի ստաժ ունեցող գիտնականները:

Ավագ գիտական աշխատողը պետք է՝

մասնակցի գիտական թեմայի շրջանակներում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր) և աշխատանքային խմբի կամ առանձին հետազոտությունների գիտական ղեկավարմանը, կազմակերպի գիտական թեմայի շրջանակներում գիտական ու գիտատեխնիկական տեղեկատվության մշակման և վերլուծության աշխատանքները, իրականացնի հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) արդյունքների վերլուծության և ընդհանրացման աշխատանքներ:

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂ

Գիտական աշխատողի պաշտոնը կարող են զբաղեցնել՝

ա) գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող գիտնականները.

բ) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում և առնվազն 5 տարվա գիտական աշխատանքի ստաժ ունեցող մասնագետները, ովքեր գիտական աշխատանքների կամ գյուտերի հեղինակ են:

Գիտական աշխատողը, որպես պատասխանատու կատարող, պետք է մասնակցի գիտական թեմայի շրջանակներում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր), գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության ու հետազոտության արդյունքների մշակման, վերլուծության և ընդհանրացման աշխատանքներին:

ԿՐՏԱԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂ

Կրտսեր գիտական աշխատողի պաշտոնը կարող են զբաղեցնել՝

ա) գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող գիտնականները.

բ) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող մասնագետները:

Կրտսեր գիտական աշխատողը պետք է մասնակցի գիտական թեմայի առանձին մասերի շրջանակներում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր)՝ պատասխանատու կատարողի ղեկավարությամբ, կատարի տվյալ թեմայով գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության ուսումնասիրություն:

Ճարտարագիտատեխնիկական պաշտոններ

ԱՎԱԳ ԼԱԲՈՐԱՆՏ

ավագ լաբորանտի պաշտոն կարող են զբաղեցնել տվյալ գիտական կազմակերպության գիտական ստորաբաժանման այն աշխատակիցները, որոնք՝ ունեն տվյալ գիտական կազմակերպության գիտական ուղղություններին համապատասխան մասնագիտությամբ դիպլոմավորված մասնագետի դիպլոմ,

ավագ լաբորանտը պետք է տիրապետի համակարգչային հմտություններին և կատարի տվյալ թեմայով գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության ուսումնասիրություններ:

ԼԱԲՈՐԱՆՏ

լաբորանտի պաշտոն կարող են զբաղեցնել տվյալ գիտական կազմակերպության գիտական ստորաբաժանման այն աշխատակիցները, որոնք՝ ունեն տվյալ գիտական կազմակերպության գիտական ուղղություններին համապատասխան մասնագիտությամբ առնվազն բակալավրի դիպլոմ,

լաբորանտը պետք է տիրապետի համակարգչային հմտություններին և բաժնի վարիչի հանձնարարությամբ կատարի գիտատատեխնիկական գործառույթներ:

ԱՎԱԳ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ

ավագ ճարտարագետի պաշտոն կարող են զբաղեցնել տվյալ գիտական կազմակերպության այն ստորաբաժանման աշխատակիցները, որոնք՝ ունեն տվյալ ստորաբաժանման գիտատեխնիկական ուղղություններին համապատասխան մասնագիտությամբ դիպլոմավորված մասնագետի դիպլոմ,

ավագ ճարտարագետը պետք է մասնակցի տիրապետի համակարգչային հմտություններին և կատարի տվյալ թեմայով գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության ուսումնասիրություններ:

ՃԱՐՏԱՐԱԳԵՏ

ճարտարագետի պաշտոն կարող են զբաղեցնել տվյալ գիտական կազմակերպության ստորաբաժանման այն աշխատակիցները, որոնք՝ ունեն տվյալ ստորաբաժանման գիտատեխնիկական ուղղություններին համապատասխան կամ փոխկապակցված մասնագիտությամբ առնվազն բակալավրի դիպլոմ,

ճարտարագետը պետք է տիրապետի համակարգչային հմտություններին և բաժնի վարիչի հանձնարարությամբ կատարի ճարտարագիտատեխնիկական գործառույթներ:

գիտաշխատողի ատեստավորում
անցկացնելու կարգի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ
Գիտաշխատողի ատեստավորում անցնելու

Ես՝ _____
Գիտաշխատողի անունը, ազգանունը

_____ Գիտաշխատողի պաշտոնը
տեղեկացված եմ՝
20 թվականի _____-ին _____ ժամին _____ վայրում

_____ ատեստավորում անցկացնելու տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, վայրը

ատեստավորում անցնելու մասին:

Տեղեկացված եմ նաև, որ ատեստավորմանը երեք անգամ չներկայանալը
գիտաշխատողին պաշտոնից ազատելու հիմք է:

/ _____ /
20 թ. _____
Գիտաշխատողի
ստորագրությունը անունը, ազգանունը ամսաթիվը

/ _____ /
20 թ. _____
Ատեստավորման հանձնաժողովի
քարտուղար անունը, ազգանունը ամսաթիվը

ստորագրությունը

Ա Տ Ե Ս Տ Ա Վ Ո Ր Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ

Ատեստավորման եղանակը՝ *հարցազրույց*

- Ազգանուն, անուն, հայրանուն
- Ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը
- Ատեստավորման պահին զբաղեցրած պաշտոնի անվանումը և այդ պաշտոնին նշանակվելու տարեթիվը
- Քվեարկությանը մասնակցել է ատեստավորման հանձնաժողովի անդամ, որից կողմ՝, դեմ՝, անվավեր՝
- Հարցազրույցի արդյունքում ատեստավորման հանձնաժողովի ընդունած որոշումը.

.....
.....

Հանձնաժողովի նախագահ՝ (.....)
անուն, ազգանուն ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ (.....)
..... (.....)
..... (.....)
..... (.....)
..... (.....)
..... (.....)
..... (.....)
..... (.....)

Կ.Տ.

Ատեստավորման անցկացման
ամսաթիվ՝ 20 թ.
Ծանոթացա ատեստավորման
թերթիկին՝

գիտաշխատողի ստորագրություն

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտում աշխատող ատեստավորվող գիտաշխատողի գիտական գործունեության և գիտական արդյունքների վերաբերյալ

Գիտաշխատողի անուն-
ազգանունը -----

Գիտաշխատողի պաշտոնը՝ -----

Գիտական աստիճանը՝ -----

Գիտական կոչումը՝ -----

N	Գիտաշխատողի գիտական արդյունքների վերաբերյալ ցուցանիշները 2016-2021 թվականներին	Գործունեության և արդյունքների նկարագրությունը
1.	Տեղական և արտասահմանյան պարբերականներում տպագրված հոդվածները:	
ա.	Հայաստանյան պարբերականներում <i>Նշել հեղինակներին, հոդվածի վերնագիրը, պարբերականը, հատորը, համարը, էջերը, տարեթիվը:</i>	Աղյուսակ 1
բ.	Արտերկրի պարբերականներում (նշել պարբերականի անվանումը) <i>Նշել հեղինակներին, հոդվածի վերնագիրը, պարբերականը, հատորը, համարը, էջերը, տարեթիվը:</i>	Աղյուսակ 2
2.	Տպագրված մենագրությունները	
ա.	Հայաստանի Հանրապետությունում <i>Նշել վերնագիրը, հրատարակչությունը, էջերի քանակը, տարեթիվը:</i>	Աղյուսակ 3
բ.	Արտերկրում <i>Նշել երկիրը, նշել վերնագիրը, հրատարակչությունը, էջերի քանակը, տարեթիվը:</i>	Աղյուսակ 4
3.	Միջազգային և հանրապետական գիտաժողովների նյութերում (Proceeding) 1 էջից ավելի ծավալ ունեցող հրապարակումները	Աղյուսակ 5

	<i>Նշել գիտաժողովի անվանումը, անցկացման տարեթիվը, աշխատանքի հեղինակներին, վերնագիրը, հրատարակչությունը, տարեթիվը, էջերի քանակը:</i>	
4.	Ներհանրապետական գիտական դրամաշնորհներ	
ա.	գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ կատարած գիտահետազոտական աշխատանքներին մասնակցություն: <i>Նշել կարգավիճակը (դեկավար, կատարող), թեմայի ծածկագիրը, վերնագիրը, կատարման ժամկետը:</i>	Աղյուսակ 6
բ.	արդյունավետ գիտաշխատողի մրցույթի շահառու	<i>Նշել տարեթիվը</i>
5.	Միջազգային գիտական հետազոտական ծրագրերին մասնակցությունը՝ ներառյալ դրամաշնորհային ծրագրերը: <i>Նշել կարգավիճակը (դեկավար, կատարող), թեմայի ծածկագիրը, վերնագիրը, կատարման ժամկետը:</i>	Աղյուսակ 7
6.	Կազմակերպությունում իրականացվող կիրառական հետազոտություններին ներգրավվածության աստիճանը (տեխնոլոգիական մշակումներ, արտադրական կանոնակարգեր, ներդրումներ, արդյունքների ապրանքայնացում՝ նշելով պայմանագրերը, արտադրատեսակները, արտադրության և իրացման ծավալները)	
7.	Գիտամանկավարժական գործունեությունը	
ա.	դասագրքերը, ուսումնական ձեռնարկները <i>Նշել վերնագիրը, հրատարակչությունը, էջերի քանակը, տարեթիվը:</i>	Աղյուսակ 8
բ.	ասպիրանտի կամ հայցորդի դեկավարում <i>Նշել ասպիրանտի կամ հայցորդի Ա.Ա.Հ., թեմայի անվանումը, մասնագիտական դասիչը, ասպիրանտի/հայցորդի ձևակերպման տարեթիվը, պաշտպանության տարեթիվը:</i>	Աղյուսակ 9
գ.	դոկտորանտի թեզի գիտական խորհրդատվություն <i>Նշել դոկտորանտի Ա.Ա.Հ., թեմայի անվանումը, մասնագիտական դասիչը, պաշտպանության տարեթիվը:</i>	Աղյուսակ 10
8.	Արտոնագրերը և հեղինակային իրավունքները <i>Նշել անվանումը, հեղինակային իրավունքի համարը,</i>	Աղյուսակ 11

	<i>տարեթիվը</i>	
9.	Պետական պարգևները, մրցանակները ու կոչումները <i>Նշել անվանումը, տարեթիվը</i>	Աղյուսակ 12
10.	Գիտակազմակերպչական գործունեություն	
ա.	Անդամություն ամսագրերի խմբագրական խորհուրդներին <i>Նշել խմբագրության անվանումը, կարգավիճակը</i>	Աղյուսակ 13
բ.	Միջազգային և հանրապետական գիտաժողովների կազմակերպում <i>Նշել գիտաժողովի անվանումը, անցկացման ժամկետները, վայրը, կազմակերպչի կարգավիճակը</i>	Աղյուսակ 14
12.	Գիտական գործունեությանը վերաբերող այլ փաստական նյութեր	

Ատեստավորվող գիտաշխատող՝

Անուն-ազգանուն, ստորագրություն

Ամիս, ամսաթիվ

ՏՎՅԱԼՆԵՐ

2016-2021թթ ներպետական գրախոսվող գիտական ամսագրերում
տպագրված հոդվածների վերաբերյալ

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ստորագրածանունը _____

Հեղինակ /ներ/	Վերնագիր	Ամսագիր	Տարի	Հատոր	Էջեր

(գիտաշխատողի պաշտոնը

(ստորագրություն)

(ա.ս.հ.)

ՏՎՅԱԼՆԵՐ

2016-2021թթ միջազգային գրախոսվող գիտական ամսագրերում տպագրված հոդվածների վերաբերյալ

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ստորագրածանունը _____

Հեղինակ /ներ/	Վերնագիր	Ամսագիր	Տարի	Հատոր	Էջեր	Նշել ազդեցության գործակիցը (Impact Factor) ¹

1. Առկայության դեպքում նշել ամսագրերի, պարբերականների «ազդեցության գործակիցը» (Web of Science (<https://webofknowledge.com/>) կամ հոդվածի/պարբերականի ինտերնետային հղումը ստորև բերվող տվյալների շտեմարաններից որևէ մեկին . ScienceDirect (<http://www.sciencedirect.com/>), Scopus (<https://www.elsevier.com/solutions/scopus>), Springer (<http://link.springer.com/>), ScimagoJournal & Country Rank (<http://www.scimagojr.com/journalrank.php>), JSTOR (<https://www.jstor.org/>

(գիտաշխատողի պաշտոնը) (ստորագրություն) (ա.ա.հ.)

ՏՎՅԱԼՆԵՐ

2016-2021թթ Հայաստանի Հանրապետությունում հրատարակված
մենագրությունների վերաբերյալ

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ստորագրամուր _____

Հեղինակ /ներ/	Վերնագիր	Հրատարակչություն	Տարի	Էջեր

(գիտաշխատողի պաշտոնը) (ստորագրություն) (ա.ա.հ.)

ՏՎՅԱԼՆԵՐ

2016-2021թթ արտերկրում հրատարակված մենագրությունների վերաբերյալ

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ստորագրածանումը _____

Հեղինակ /ներ/	Վերնագիր	Հրատարակչություն	Երկիր	Տարի	Էջեր	Նշել ազդեցության գործակիցը (Impact Factor) ¹

1. Առկայության դեպքում նշել ամսագրերի, պարբերականների «ազդեցության գործակիցը» (ըստ Book citation index-ի)

(գիտաշխատողի պաշտոնը) (ստորագրություն) (ա.ա.հ.)

ՏՎՅԱԼՆԵՐ

**2016-2021թթ գիտժողովներին և գիտական այլ միջոցառումներին
գիտական աշխատողի մասնակցության վերաբերյալ**

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ստորաբաժանումը _____

Գիտական միջոցառման տեսակը ¹ , խորագիրը	Ջեկուցման Կարգավիճակը ²	Միջոցառման կարգավիճակը ³	Ջեկուցման վերնագիրը	Միջոցառման ժամկետները

1. Համաժողով, գիտաժողով, սիմպոզիում, սեմինար և այլն:
2. Պլենար, հրավիրված, սեկցիոն, ստենդ և այլն:
3. Միջազգային, հանրապետական, ներինստիտուտային:

(գիտաշխատողի պաշտոնը) (ստորագրություն) (ա.ա.հ.)

Աղյուսակ 6

2016-2021թթ. ընթացքում գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ կատարած գիտահետազոտական աշխատանքներին մասնակցության ցանկ

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ստորագրածանունը _____

Դրամաշնորհի ձածկագիրը	Թեմայի վերնագիրը	Գործողության ժամկետը	Գիտական աշխատողի կարգավիճակը (ղեկավար, կատարող)	Տվյալներ արդյունքների վերաբերյալ

(գիտաշխատողի պաշտոնը)

(ստորագրություն)

(ա.ա.հ.)

**Միջազգային դրամաշնորհներով, համաձայնագրերով, պայմանագրերով
2016-2021թթ. գիտական աշխատողների կատարած
հետազոտությունների ցանկ**

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ստորագրած ամսաթիվ _____

Դրամաշնորհի ծածկագիրը, համարը, համաձայնագրի, պայմանագրի համարը, կողմերը	Թեման, պայմանագրի, համաձայնագրի առարկան, վերնագիրը	Դրամաշնորհի, պայմանագրի, համաձայնագրի գործողության ժամկետը	Գիտական աշխատողի կարգավիճակը (ղեկավար, կատարող)	Տվյալներ արդյունքների վերաբերյալ
1. դրամաշնորհներ				
....				
....				
2. պայմանագրեր, համաձայնագրեր				
....				
....				

(գիտաշխատողի պաշտոնը)

(ստորագրություն)

(ա.ա.հ.)

ՏՎՅԱԼՆԵՐ

2016-2021թթ գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ստորագրածանունը _____

Հեղինակ /ներ/	Դասագրքի, մեթոդական ձեռնարկի վերնագիր	Հրատարակչություն	Երկիր	Տարի	Էջեր	Նշել ազդեցության գործակիցը (Impact Factor) ¹

1. Առկայության դեպքում նշել ամսագրերի, պարբերականների «ազդեցության գործակիցը» (ըստ Book citation index-ի)

(գիտաշխատողի պաշտոնը) (ստորագրություն) (ա.ա.հ.)

ՏՎՅԱԼՆԵՐ

2016-2021թթ գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ստորագրածանունը _____

Ասպիրանտի կամ հայցորդի Ա.Ա.Հ.	Թեմայի անվանումը	Մասնագիտական դասիչը	Ասպիրանտի/հայցորդի ձևակերպման տարեթիվը	Պաշտպանության տարեթիվը

(գիտաշխատողի պաշտոնը

(ստորագրություն)

(ա.ա.հ.)

ՏՎՅԱԼՆԵՐ

2016-2021թթ գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ստորագրածանունը _____

Դոկտորանտի Ա.Ա.Հ.	Թեմայի անվանումը	Մասնագիտական դասիչը	Պաշտպանության տարեթիվը

(գիտաշխատողի պաշտոնը) (ստորագրություն) (ա.ա.հ.)

ՏՎՅԱԼՆԵՐ

2016-2021թթ ստացած արտոնագրերի և հեղինակային իրավունքների վերաբերյալ

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ստորագրածանունը _____

Անվանումը	Հեղինակային իրավունքի համարը	Տարեթիվը

(գիտաշխատողի պաշտոնը) (ստորագրություն) (ա.ա.հ.)

ՏՎՅԱԼՆԵՐ

2016-2021թթ ստացած պետական պարգևների, մրցանակների ու կոչումների վերաբերյալ

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ստորագրածանումը _____

Պարգևի տեսակը և անվանումը	Ինչի համար է տրվել	Պարգևի արժանանալու տարեթիվը, փաստաթղթի սվյալները

(գիտաշխատողի պաշտոնը) (ստորագրություն) (ա.ա.հ.)

ՏՎՅԱԼՆԵՐ

Գիտական ամսագրերի, պարբերականների խմբագրական խորհուրդներին, խմբագրակազմին մասնակցության, գրքերի, գիտական ժողովածուների խմբագրման մասին (2016-2021 թթ.)

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ստորագրամուկ _____

h/h	Ամսագրի, պարբերականի, մենագրության, հոդվածների ժողովածուի անվանումը, վերնագիրը	Խմբագրական աշխատանքներին մասնակցության ձևը

(գիտաշխատողի պաշտոնը

(ստորագրություն)

(ա.ա.հ.)

ՏՎՅԱԼՆԵՐ

2016-2021թթ գիտական նստաշրջանների և գիտական այլ միջոցառումների կազմակերպման աշխատանքներին գիտական աշխատողի մասնակցության վերաբերյալ

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ստորագրածանումը _____

Գիտական միջոցառման տեսակը ¹ , խորագիրը	Միջոցառման վայրը, ժամկետները	Գիտական միջոցառման նախապատրաստմանը մասնակցության ձևը ²	Գիտական միջոցառման անցկացմանը մասնակցության ձևը ²

1. Համաժողով, գիտաժողով, սիմպոզիում, սեմինար և այլն:
2. Կազմկոմիտեի նախագահ, համանախագահ, գիտական քարտուղար, կազմկոմիտեի անդամ և այլն:

(գիտաշխատողի պաշտոնը

(ստորագրություն)

(ա.ա.հ.)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°

Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող աշխատողի
որակավորման գնահատման նպատակով ատեստավորման նիստի

Ատեստավորման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ժամը՝	Վայրը՝
Հանձնաժողովի անդամներ՝	
Նախագահ՝ Քարտուղար՝	

Հանձնաժողովի նախագահ՝ _____ (անուն, ազգանուն) _____ (ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ (անուն, ազգանուն) _____ (ստորագրություն)

_____ (անուն, ազգանուն) _____ (ստորագրություն)

_____ (անուն, ազգանուն) _____ (ստորագրություն)

_____ (անուն, ազգանուն) _____ (ստորագրություն)

_____ (անուն, ազգանուն) _____ (ստորագրություն)

Մեթոդաբանություն

1) **Գիտական ամսագրերի հրապարակումների:** Հրապարակում գիտական ամսագրում՝ հոդված (Article) կամ ակնարկ (Review)՝ Web of Knowledge, Scopus, ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտեի (այսուհետ՝ ԲՈԿ) ցանկերում ընդգրկված ամսագրում, ինչպես նաև այդ ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրում:

Յուրաքանչյուր հոդվածի համար՝

$$E_1 = \sum IF \left(\frac{1 + C/10}{N} \right)^{1/3}$$

որտեղ՝

IF՝ ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցը (այսուհետ՝ ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների,

N՝ ընդհանուր համահեղինակների թվաքանակ,

C՝ հղումների քանակ՝ առանց ինքնահղումների (միջազգային համագործակցությունների համար հաշվարկվում է ընդհանուր հղումների 10%-ը):

0.2-ից ցածր ԱԳ-ի դեպքում նրան վերագրվում է՝

0.25՝ ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded(SCIE)», «Emerging Sources Citation Index(ESCI)» կամ «Scopus») ընդգրկված ամսագրում գիտական հրապարակման, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ-ի կողմից հրատարակվող և ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված գիտական հրապարակման դեպքում,

0.15՝ ԱԳ չունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («SCIE», «AHCI», «SSCI», «ESCI» կամ «Scopus») չընդգրկված, բայց ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված գիտական հրապարակման դեպքում,

0.075՝ ԱԳ չունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («SCIE», «SSCI», «ESCI», «AHCI» կամ «Scopus») չընդգրկված, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակման դեպքում:

2) Մենագրությունների, կոլեկտիվ մենագրությունների, գիտական հրապարակումների, նյութերի ժողովածուների հրապարակումների: Մենագրություն,

կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող հրապարակում: Նյութերի ժողովածու՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող հրապարակում:

Յուրաքանչյուր մենագրության, կոլեկտիվ մենագրության, գիտական հրապարակումների կամ հոդվածի համար`

$$E_2 = \left\{ \begin{array}{l} \sum B \frac{P_{SH}}{N^{1/3}} \\ \sum \frac{CA}{N^{1/3}} \end{array} \right.$$

որտեղ`

B=0,30` *Web of Science* գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (*Book Citation Index*) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում,

CA=0,75` արտերկրում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում (օտար լեզվով),

CA=0,5` ՀՀ պետական ուսումնական հաստատության կամ ՀՀ ԳԱԱ գիտական խորհրդի կողմից երաշխավորված ՀՀ-ում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում (օտար լեզվով կամ հայերեն), կամ (*Book Citation Index*) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրապարակված գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում

CA=0,15` հոդված արտերկրում օտար լեզվով հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ,

CA=0,075` հոդված ՀՀ-ում հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ (օտար լեզվով կամ հայերեն),

P_տ` ծավալ (տպագրական մամուլ):

3) **Գիտաժողովների մասնակցության:** Գնահատվում են միայն գիտաժողովի նյութերում (Proceeding) 1 էջից ավելի ծավալ ունեցող հրապարակումները՝

$$E_3 = \sum \frac{P}{N^{1/3}}$$

որտեղ՝

$P=0,15$ ՝ արտերկրում տեղի ունեցած միջազգային գիտաժողովի նյութ,

$P=0,075$ ՝ ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի նյութ:

4) **Գիտական դրամաշնորհների, գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմաների ղեկավարում և առդյունավետ գիտաշխատող:** Գիտական հետազոտությունների համար ստացված դրամաշնորհ կամ թեմա՝ մեկ և ավելի տարի տևողությամբ:

$$E_4 = \sum Gr$$

Յուրաքանչյուր դրամաշնորհի կամ թեմայի համար՝ $Gr=1$.

Արդյունավետ գիտաշխատող շահարույի համար՝ $Gr=1$.

5) **Թեկնածուական ատենախոսությունների ղեկավարման և դոկտորանտի թեզի գիտական խորհրդատվություն :**

$$E_5 = \sum PhD$$

Ղեկավարությամբ պաշտպանված յուրաքանչյուր ատենախոսության համար՝ $PhD=1,00$,

Խորհրդատվությամբ պաշտպանված յուրաքանչյուր ատենախոսության համար՝ $PhD=1,00$,

6) **Արտոնագրերի:**

$$E_6 = \sum \frac{Pt}{N^{1/3}}$$

Յուրաքանչյուր արտոնագրի համար`

Pt=1,00` արտերկրում գրանցված,

Pt=0,15` ՀՀ-ում գրանցված:

7) **Գիտական պարզևներ:**

$$E_7 = \sum Gr$$

Պետական մրցանակ` Gr=2.

Նախագահի մրցանակ` Gr=2.

Վաստակավոր գործիչ` Gr=2.

8) **Գիտական ամսագրերի խմբագրական կազմին անդամակցություն:**

$$E_8 = \sum Gr$$

Հանրապետական Գիտական ամսագրերից յուրաքանչյուրի խմբագրական կազմին անդամակցություն Gr=0,25, (նախագահ` Gr=0,25)

Արտասահմանյան Գիտական ամսագրերից յուրաքանչյուրի խմբագրական կազմին անդամակցություն Gr=0,3

9) **Միջազգային և հանրապետական գիտական կոնֆերանսների կազմակերպում:**

$$E_9 = \sum Gr$$

Յուրաքանչյուր կոնֆերանսի կազմակերպում`

Gr=0,25 միջազգային գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ

Gr=0,25 միջազգային գիտաժողովի կազմկոմիտեի նախագահի տեղակալ

Gr=0,25 միջազգային գիտաժողովի գիտական քարտուղար

Gr=0,25 միջազգային գիտաժողովի կազմկոմիտեի անդամ

Gr=0,25 հանրապետական գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ

Gr=0,25 հանրապետական գիտաժողովի կազմկոմիտեի նախագահի տեղակալ

Gr=0,25 հանրապետական գիտաժողովի գիտական քարտուղար

Gr=0,25 հանրապետական գիտաժողովի կազմկոմիտեի անդամ

Սույն մեթոդաբանության 1)-9)-րդ կետերի գումարն է

$$E = \sum_{i=1}^9 E_i$$